Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» նոյեմբերի 2010 թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՄՈՆՐԵԱԼ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել 2010թ. հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքի և Մոնրեալ քաղաքի միջև Փոխըմբռնման հուշագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՄՈՆՐԵԱԼ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Կանադայի քաղաքների հետ երկկողմ համագործակցության անհրաժեշտությունից և հիմք ընդունելով 2010թ. հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքում Երևան քաղաքի և Մոնրեալ քաղաքի միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագիրը, նպատակ ունենալով ակտիվացնել երկու քաղաքների միջև առկա կապերը, անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ հուշագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՄՈՆՐԵԱԼ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Երևան քաղաքի և Կանադայի Մոնրեալ քաղաքի միջև փոխըմբռնման հուշագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Փոխըմբռնման հուշագիր

Հայաստանի Երևան քաղաքի և Կանադայի Մոնրեալ քաղաքի միջև

Երկու քաղաքների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում

Համաձայնագիրը նախատեսում է համագործակցություն 2010-2012թ. ժամանակահատվածում

Ելնելով 2001թ.-ի հուլիսի 5-ին Հայաստանի Երևան քաղաքի և Կանադայի Մոնրեալ քաղաքի միջև կնքված համաձայնագրից, ինչպես նաև առաջնորդվելով երկու քույր քաղաքների միջև գոյություն ունեցող ջերմ հարաբերությունները զարգացնելու և խորացնելու ցանկությամբ և մտադրությամբ, Մոնրեալ քաղաքը և Երևան քաղաքը սույն հուշագրով հաստատում են իրականացնել հետևյալ միջոցառումները.

ՀՈԴՎԱԾ 1

Խորացնել համագործակցությունը երկու կողմերի միջև Ֆրանսախոս Քաղաքապետերի Միջազգային Ասոցիացիայի շրջանակներում:

ՀՈԴՎԱԾ 2

Աջակցել և խթանել Հայաստանում բնապահպանական կենտրոնի ստեղծմանը՝ կազմակերպելով փորձի փոխանակումներ Երևան քաղաքի և Մոնրեալ քաղաքի միջև: Բացի այդ, Սեն Միշելի բնապահպանական կենտրոնը տեխնիկական խորհրդատվություն և աջակցություն կցուցաբերի՝ Երևանում նմանատիպ կենտրոն հիմնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 3

Փոխանցել տեխնիկական հմտություններ և միջոցներ ձեռնարկել դրանք ամրապնդելու համար՝ նպատակ ունենալով օգնել Երևան քաղաքին պլանավորել որոշ հիմնական քաղաքային ծառայություններ, ինչպիսիք են փողոցների ձյանմաքրման և ջրի վերամշակման աշխատանքները:

ՀՈԴՎԱԾ 4

Երևան և Մոնրեալ քաղաքները համատեղ աշխատանքներ են տանելու, որպեսզի նրանց փոխադարձ բարեկամությունն առարկայական ճանաչում գտնի ինչպես Երևանում, այնպես էլ Մոնրեալում:

ՀՈԴՎԱԾ 5

Համագործակցելով Մոնրեալի հայկական համայնքի հետ՝ Մոնրեալ քաղաքը յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամիսը կնվիրի Մոնրեալում ներկայացնելու Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի մշակութային ժառանգությունը:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն փոխըմբռնման հուշագիրը պատրաստվել է հայերեն և ֆրանսերեն լեզուներով: Բոլոր օրինակները հավասարազոր են:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին գործընթացների կատարման մասին վերջին պաշտոնական գրավոր տեղեկացումը:

Ստորագրված է Երևան քաղաքում, 2010 թվականի հոկտեմբերի 28-ին:

ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ	**ԺԵՐԱԼԴ ԹՐԵՄԲԼԵՅ**
Երևանի քաղաքապետ	**Մոնրեալի քաղաքապետ**